ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Հ. Ս. Խ. Հ. ՖԻՆԺՈՂԿՈՄԱՏԻ

# ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՊԵՏԱԿԱՆ ՅԵԿԱՄՏԱՀԱՐԿՈՎ ՏՈՒՐՔԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

## ԳՈՐԾՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

ՎԱՐՁՈՒ ԲԱՆՎՈՐՆԵՐ ՅԵՎ ԾԱՌԱՅՈՂՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԲՈԼՈՐ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՅԵՎ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Կազմեց Հ. Տեր-Հակոբյան

ՅԵՐԵՎԱՆ 1929

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Հ. Ս. Խ. Հ. ՖԻՆԺՈՂԿՈՄԱՏԻ

# ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՊԵՏԱԿԱՆ ՅԵԿԱՄՏԱՀԱՐԿՈՎ ՏՈՒՐՔԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

## ԳՈՐԾՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

ՎԱՐՁՈՒ ԲԱՆՎՈՐՆԵՐ ՅԵՎ ԾԱՌԱՅՈՂՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԲՈԼՈՐ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՅԵՎ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Կազմեց Հ. Տեր-Հակոբյան

ՅԵՐԵՎԱՆ 1929

Ա 23969

ՅԵՐԵՎԱՆ
ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ I ՏՊԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ 801 ՏԻՐԱԺ· 1000
ԳՐԱՌԵՊԳԼԽՎԱՐ. 900 Բ.

# ԱՌԱՋԱԲԱՆ

Պետական յեկամտահարկի որենսդրությամբ բանվորների, ծառայողների և պետական կենսաթոշակառուների հարկադրումը կրում ե առանձնահատուկ բնույթ, վճարողների այդ խմբերի տուրքադրման համեմատությամբ:

Առևտրական և արդյունաբերական ձեռնարկություններից, արհեստներից, ազատ պրոֆեսիաներից և այլ զբաղմունքներից յեկամուտ ունեցողների հարկադրումը կատարվում ե բացառապես ուղղակի հարկերի տեսուչների և շրջանային հարկային հանձնաժողովների միջոցով, այն ինչ բանվորների և ծառայողների տուրքադրման մեջ խոշոր դեր ե հատկացված վարձող հիմնարկներին, ձեռնարկություններին և առանձին անհատներին:

Խորհրդային Միության մեջ յեկամտահարկի սահմանման նախնական շրջանում վարձողները ուղարկում եյին հարկային մարմիններին իրենց վարձու բանվորների և ծառայողների ցուցակները, վորոնց հիման վրա հիշյալ մարմինները կատարում եյին հարկադրման ամբողջ տեխնիքական աշխատանքը: Հետագայում վարձողների դերը հետզհետե ավելի լայնացվում ե և վերջին տարիներում հարկման այդ կարգը յենթարկվում ե մի շարք այնպիսի փոփոխությունների, վորոնք վարձողների վրա յեն բարդում ամբողջովին բանվորների և ծառայողների հարկադրման գործը, վերապահելով հարկային մարմիններին լոկ ստուգման և հրահանգման պարտականությունները:

Այդպիսով աշխատավարձի հարկադրումը ավելի յե մեկուսանում յեկամտահարկի մեջ, հեռանալով այլ ոբյեկտների տուրքադրման կարգից, իսկ, այժմ գործող, 1927 թ. դեկտեմբերի 14-ին հաստատված յեկամտահարկի կանոնադրությունը այդ ուղղությամբ այնքան հեռու յե գնում, վոր աշխատավարձի հարկադրման ձևը հիմնովին շեղվում ե ընդհանուր տուրքադրման կարգի հիմնական սկզբունքներից: Ըստ նոր կանոնադրության հարկադրվում ե վարձու բանվորների և ծառայողների ընթացիկ

ամսվա աշխատավարձը, հետևապես հարկումը կատարվում է յուրաքանչյուր ամիս, այն ինչ ընդհանուր կարգով արձանագրվում է հարկատուի անցյալ տարում ստացած եկամուտը և հարկադրումը կատարվում է տարին մեկ անգամ:

Այդ շեղումները սահմանված են միմիայն աշխատավարձի հարկադրումը ավելի պարզ և հեշտ դարձնելու համար, վորովհետև այդ հարկադրումը այժմ կատարվում է վարձողների միջոցով, վորոնք, մանավանդ չլինելով հարկային գործում, մեծ դժվարությունների չեն հանդիպում աշխատավարձի հարկման տեխնիկական հարցերում:

Վորքան էլ վոր այդ հարկադրումը այժմ պարզ է և իր ձևով հասարակ, բայց և այնպես, նա շատ դժվարացնում է հարկային գործին անծանոթ այն պաշտոնյաներին, վորոնք հիմնարկներում և ձեռնարկություններում կատարում են աշխատավարձի հարկադրումը, պահում են հարկի գումարները, հանձնում են վերջինները ժամանակին պետական բանկի դրամարկղները և ներկայացնում են պատշաճ հարկային մարմիններին սահմանված ձևով հաշվետվություն հարկի կիրառման մասին:

Հիմնարկների և ձեռնարկությունների այդ աշխատանքը թեթևացնելու համար, ՀՍԽՀ Ֆինժողկոմատի Հարկային Վարչությունը անհրաժեշտ է գտնում լույս ընծայել սույն բրոշյուրը, վորի մեջ ամփոփված են այն բոլոր տեղեկությունները, վորոնք անհրաժեշտ են նրանց՝ բանվորներին, ծառայողներին և պետական կենսաթոշակառուներին հարկադրելու համար: Ամբողջ նյութը քաղված է պետական եկամտահարկի կանոնադրությունից, վերջինի կիրառման մեթոդական հրահանգից և նրանց հրապարակումից հետո տեղի ունեցած պարզաբանումներից և շրջաբերականներից: Այդ աղբյուրները ցույց են տրված փակագծի մեջ ներքևի համապատասխան տեղերում: Հարկային գործին անտեղյակ անձանց համար անհասկանալի կետերը պարզելու համար կցված են համապատասխան օրինակներ:

Բացի № 1ա դրույքատախտակից, վորով հարկադրվում է աշխատավարձը, և հարկի կիրառման մեջ անհրաժեշտ ձևերից, սույն բրոշյուրին կցվում է աշխատավարձից արդեն հաշված հարկի դրույքների մի տախտակ, վորից հիմնարկները և ձեռնարկությունները կարող են մեքենաբար, առանց թվաբանական գործողությունների կատարելու, վերցնել յուրաքանչյուր հարկատուից հասանելիք հարկի գումարները:

Հարկային Վարչությունն առաջարկում է իր կողմից վարձու բանվորներ և ծառայողներ ունեցող բոլոր հիմնարկներում և ձեռնարկություններում ունենալ այն ժողովածուն, որի գործնական ղեկավարությունը կհարթի նրանց համար շատ դժվարություններ, կանխելով ապագա սխալները և զանցառությունները, որոնց համար շատ անգամ նրանք յենթարկվում են դրամական տույժի կամ պատասխանատվության՝ կարգապահական և քրեական կարգով:

Սույն գրքույկը առաջին փորձն է մեր պետական լեզվով ժողովրդականացնելու պետական ուղղակի հարկերի օրենսդրական նյութերը, բացի գյուղհարկից, որը իր մասսայական բնույթի շնորհիվ ունեցել է մի քանի բրոշյուրների հրատարակություն: Մինչև այժմ հայերեն թարգմանված չեն նույնիսկ յեկամտային և արհեստագործական հարկերի հիմնական կանոնադրությունները, որոնք հրապարակված են ռուսերեն և գործում են ամբողջ ԽՍՀ Միության մեջ:

Վորովհետև հարկային աշխատավորներից շատերը լավ չեն տիրապետում ռուսերենին, գրքույկը շատ օգտակար կարող է լինել և հարկային ապարատի համար, որը պարտավոր է հսկելու բանվորների և ծառայողների ճիշտ հարկադրման վրա վարձողների կողմից:

**ՀՍԽՀ ՖԻՆԺՈՂԿՈՄԱՏԻ ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**

# ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՀԱՐԿՈՒՄԸ

## I. ՈՎ Է ՀԱՐԿԱԴՐՈՒՄ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ

Բանվորների, ծառայողների և պետական կենսաթոշակառուների աշխատավարձը կամ կենսաթոշակը հարկադրում են յուրաքանչյուր ամիս յեկամտահարկով այն հիմնարկները, ձեռնարկությունները և անձինք, վորոնցից նրանք աշխատավարձ կամ կենսաթոշակ են ստանում (Յեկամտահարկի Կանոնադրութ. հոդ. 49):

Այն դեպքերում, յերբ մի բանվոր կամ ծառայող աշխատավարձ է ստանում մի քանի վայրերում, յուրաքանչյուր հիմնարկի և ձեռնարկության մեջ նրա ստացած աշխատավարձը հարկադրվում է յեկամտահարկով առանձին: Յուրաքանչյուր վարձող հաշվի յե առնում բանվորի կամ ծառայողի միմիայն այն աշխատավարձը, վոր ինքն է վճարում, անկախ հարկատուի այլ վայրերում ստացած աշխատավարձից, վորոնք հարկադրվում են առանձին:

Նմանապես յեթե կենսաթոշակառուն աշխատավարձ է ստանում վորևէ վայրում, այդ աշխատավարձը հարկադրվում է կենսաթոշակից առանձին. կենսաթոշակը հարկադրում է այն հիմնարկությունը, վորը վճարում է թոշակը, իսկ աշխատավարձը հարկադրում է համապատասխան վարձողը (Կանոն. հոդվ. 50-դ):

Բանվորների, ծառայողների և պետական կենսաթոշակառուների հարկումը կատարվում է աշխատավարձի կամ կենսաթոշակի ստացման տեղում անկախ նրանից, թե վորքան ժամանակ է, վոր նրանք գտնվում են այնտեղ ծառայության կամ կենսաթոշակային ապահովման մեջ (Հրահանգ § 181):

Այն բանվորները և ծառայողները, վորոնք ըստ իրենց ծառայության կամ աշխատանքի բնույթի աննստակյաց են, ինչպես յերկաթուղային և ջրային փոխադրումների բանվորները և ծառայողները, շրջիկ դերասանները, զանազան հետախուզությունների և վորոնումներ կատարող պետական աշխատակիցները, տեխնիքական և այլ աշխատանքներ կատարող, և այլ նման անձինք, հարկադրվում են այն ձեռնարկությունների և հիմնարկների կող-

մէջ, որոնք պահանջացուցակներ են կազմում՝ նրանց վարձատրության տալու համար (Հրահանգի § 182)։

Բանվորների, ծառայողների և տեխնիկական կենսաթոշակառուների այլ աղբյուրներից ստացած յեկամուտները հարկադրվում են ընդհանուր կարգով այն շրջանային հարկային հանձնաժողովները և ուղղակի հարկերի տեսուչները, վորոնց շրջանում է գտնվում նրանց բնակավայրը (Հրահանգ § 20)։

Այլ աղբյուրներից ստացած յեկամուտներն այն յեկամուտներն են, վորոնք ունեցել են բանվորները, ծառայողները և տեխնիկական կենսաթոշակառուները վորևէ ձեռնարկությունից, առևտրա-արդյունաբերական գործունեությունից կամ վոչ վարձու աշխատանքից, անկախ իրենց աշխատավարձից կամ կենսաթոշակից։

Օրինակ․ Յերևան քաղաքում մի ծառայող աշխատում է յերկաթուղու կայարանում, վորտեղ ստանում է ամսական 150 ռ․, ապրում է քաղաքի I մասի ուղղակի հարկերի տեսչության շրջանում և ունի տուն II-րդ քաղաքամասում, վորից անցյալ տարի ստացել է յեկամուտ 1000 ռ․։ Այդ քաղաքացին յենթակա յե յեկամտահարկի հետևյալ ձևով․ նրա ընթացիկ աշխատավարձը (150 ռ․) հարկադրվում է յուրաքանչյուր ամիս յերկաթուղու կայարանի վարչությունը, իսկ անցյալ տարում ունեցած յեկամուտից (1000 ռ․) տուրքադրվում է I քաղաքամասի շրջհարկային հանձնաժողովի ընդհանուր կարգով ըստ նրա ապրելավայրի, թեև նրա այդ յեկամտի աղբյուրը գտնվում է II-րդ քաղաքամասում։

Ընդհանուր կարգով է հարկադրվում նույնպես հիմնարկներում և ձեռնարկություններում ակորդային վարձատրության հիմունքներով աշխատողների վաստակը, ինչպես օրինակ՝ տեխնիկական գործակալների, կոմի-վոյաժորների, ապահովագրական գործակալների և այլոց վարձատրությունը։ Այդ անձանց և նախկին տարվա ընթացքում նրանց ստացած ակորդային վարձատրության գումարների մասին հիմնարկները և ձեռնարկությունները հայտնում են տեղական ֆինբաժնին յուրաքանչյուր բյուջետային տարվա սկզբին, նոյեմբերի 1-ից վոչ ուշ։

Այդ տեղեկությունների համար սահմանված է յեկամտահարկի կիրառման հրահանգին կցված № 2 ձևը, վորը զետեղված է սույն բրոշյուրի հավելվածների մեջ 1 համարի տակ։

## 2. ԲԱՆՎՈՐՆԵՐԻՑ, ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՑ ՅԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՌՈՒՆԵՐԻՑ ՎՈՐՈՆՔ ԵՆ ԶԱՐԿԱԴՐՎՈՒՄ

*Բանվորները, ծառայողները և պետական կենսաթոշակառուները յենթակա յեն յեկամտային հարկի ըստ իրենց աշխատավարձի և կենսաթոշակի, յեթե յուրաքանչյուր ամսվա ստացվելիք այդ յեկամուտը գերազանցում է սահմանված մինիմումին:*

*Չհարկադրվող մինիմում—դա յեկամտի այն չափն է, վորից չգերազանցելու դեպքում ստացված յեկամուտը չի հարկադրվում և վորպիսի յեկամուտը ստացողը բոլորովին ազատվում է յեկամտային հարկից:*

*Չհարկադրվող մինիմումը սահմանելով, օրենսդրությունը նպատակ ունի ազատելու հարկից քաղաքացիների այն չնչին յեկամուտները, վորոնք անհրաժեշտ են նրանց ապրուստի տարրական կարիքները հոգալու:*

*Մինիմումի նորմաները բոլոր վայրերի համար միատեսակ չեն: Նրանք սահմանված են Խորհրդային Միության մասշտաբով ըստ չորս տարբեր գոտիների հետևյալ ձևով. I-ին գոտի՝ 100 ռ., 2-րդ գոտի՝ 90 ռ., 3-րդ գոտի՝ 80 ռ. և 4-րդ գոտի՝ 75 ռ.: (Կան. հոդ. 3):*

*Հայաստանի բոլոր բնակավայրերը համաձայն այդ բաժանման դասավորված են ըստ գոտիների այսպես՝*

*1) Յերևան և Լենինական քաղաքները պատկանում են II գոտուն, 2) Մարտունական, Դիլիջան, Նոր-Բայազետ, Վաղարշապատ և Գորիս քաղաքները—III-րդ գոտուն, և 3) բոլոր մյուս բնակելի վայրերը—IV-րդ գոտուն:*

*Այն դեպքում, յերբ բանվորը կամ ծառայողը աշխատավարձ է ստանում իր աշխատանքի կամ ծառայության համար մի քանի տեղերում, յուրաքանչյուր հիմնարկության կամ ձեռնարկության մեջ նա հարկադրվում է միայն այն դեպքում, յեթե այնտեղ իր ստանալիք ռոճիկը գերազանցում է չհարկադրվող մինիմումը: Հակառակ դեպքում նա յենթակա չէ հարկադրման այդ հիմնարկության կամ ձեռնարկության մեջ, յեթե նույնիսկ նրա բոլոր*

տեղերում ստանալիք աշխատավարձի ընդհանուր գումարը շատ ավելի բարձր է չհարկադրվող մինիմումից:

Հարկման նույն այդ կարգը տարածվում է նույնպես կենսաթոշակ ստացողների վրա:

Օրինակ. Լենինական քաղաքում մի հաշվապահ աշխատում է բանկայում և գավգործկոմի կոմունալ բաժնում: Բանկայում նա ստանում է ռոճիկ ամսական 85 ռ., իսկ կոմունալ բաժնում 70 ռ.:

Այդ քաղաքացին չի հարկադրվում ոչ բանկայում և ոչ էլ կոմունալ բաժնում, որովհետև երկու հիմնարկություններից էլ ստացած ռոճիկը առանձին չի գերազանցում Լենինական քաղաքի (2-րդ գոտի) համար սահմանված չհարկադրվող մինիմումը (90 ռ.), թեև նրա երկու տեղերում ստացած աշխատավարձի ընդհանուր գումարը (155 ռ.) շատ ավելի բարձր է մինիմումից:

Հարկադրման ժամանակ յուրաքանչյուր դեպքում կիրառվում է չհարկադրվող մինիմումի այն չափը, որը սահմանված է այն վայրի համար, ուր հարկատուն աշխատավարձ կամ կենսաթոշակ է ստանում (Հրահանգ § 11):

Եկամտահարկից ազատ են՝ (Կանոնադր. հոդվ. 5)

ա) այն բանվորները և ծառայողները, որոնց աշխատավարձը հաշվի չի առնվում իրենց գյուղական տնտեսության եկամուտի հետ և հարկադրվում է միասնական գյուղատնտեսական հարկով.

բ) կառուցող այն բանվորները, որոնք ամբողջ տարվա ընթացքում չեն աշխատում, սեզոնային և ժամանակավոր բանվորները.

գ) բացի ռոճիկից եկամուտ այլ աղբյուրներ չունեցող՝ Կարմիր բանակի շարքային և հրամանատարական կազմին պատկանող զինվորականները, որոնք գտնվում են Բանվորագյուղացիական Կարմիր բանակի շարքերում:

Բանվորա-գյուղացիական միլիցիայի շարային կազմի պաշտոնյաները.

Միացյալ Պետական Քաղաքական Վարչության, դաշնակից հանրապետությունների Պետքաղվարչությունների և նրանց տեղական մարմինների հաստիքավոր աշխատակիցները.

դ) օտար դիվանագիտական կորպուսին պատկանող անձինք.

ե) ՍԽՀ Միության մեջ գտնվող օտարերկրյա հյուպատոսական ներկայացուցիչները և պաշտոնական հյուպատոսական կազմի այլ անձինք, որոնք օտարերկրյա քաղաքացիներ են.

գ) ՍԽՀ Միության մեջ գտնվող ոտարյերկրյա դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունների աշխատակիցները, վորոնք ոտարյերկրյա քաղաքացիներ են։

Սույն հոդվածի «գ», «ե» և «զ» կետերում հիշված անձինք ազատվում են յեկամտահարկից միմիայն փոխադարձ պայմանով (ծանոթ. 1 հոդվ. 5)։

Այն բանվորները և ծառայողները, վորոնց աշխատավարձը հաշվի յե առնված գյուղհարկի մեջ, պարտավոր են ներկայացնել վարձող հիմնարկներին և ձեռնարկություններին այդ մասին անգեկանք համապատասխան շրջանային գործադիր կոմիտեյից, կամ գյուղական խորհրդից (Հրահ. § 213)։

Միասնական գյուղհարկի կիրառման վայրերում, վորոնք են բոլոր գյուղական վայրերը և Մարտունական, Եջմիածին, Դիլիջան, Նոր-Բայազետ ու Գորիս քաղաքները, գյուղատնտեսություն ունեցող բանվորների և ծառայողների աշխատավարձն ընդհանրապես հաշվի յե առնվում գյուղհարկի տուրքադրման ժամանակ, բացառությամբ մի շարք աշխատանքների վարձից, վորը յենթակա չե գյուղհարկի և, չհարկադրվող մինիմումը գերազանցելու դեպքում, տուրքադրվում է յեկամտային հարկով։

Համաձայն գյուղհարկի 1928 թ. ապրիլի 1-ի կանոնադրության 9-րդ հոդվածի, դա այն աշխատավարձն է, վորը ստացվում է՝

1. Պարհակի կարգով կատարվող աշխատանքի համար.

2. Գյուղատնտեսական բանվորության (բատրակության) համար.

3. Խորհրդային ընտրովի պաշտոններից (գործկոմների կամ գյուղխորհուրդի անդամների պաշտոններ վարելուց).

4. Փոխոգկոմների և համապատասխան կազմակերպությունների, նաև գյուղական ստորին կոոպերատիվների մեջ ընտրովի պաշտոններ վարելուց.

5. Գյուղական, շրջանային բժշկական և անասնաբուժական պաշտոններ վարելուց (բժշկի, ատամնաբույժի, բուժակի, մանկաբարձուհու և այլն), շրջանային գյուղատնտեսի, նրա ոգնականի, գավառակային հողաշինարարի և մելիորատորի, անտառապետի, անտառապետի ոգնականի, անտառային պահակի, գյուղական ժողովրդական ուսուցչի, ժողդատավորի, գյուղխորհրդի քարտուղարի, գյուղական նամակատարի, գյուղի միլիցիոների, շրջանային վիճակագրի, ինչպես նաև գյուղական հիվան-

կոլխոզներում, սովխոզներում, շրջգործկոմներում ու գյուղխորհուրդներում ընտրական պաշտոններ վարելուց.

6. Նմանապես կուլտ-կրթական աշխատանքի (ռաբթղթակցի, խրճիթվարի) վարձատրությունը և պետական հիմնարկներից ստացվող կենսաթոշակը:

Այդպիսով գյուղական վայրերում աշխատող ծառայողներից և բանվորներից շատերը դարձյալ ենթակա են եկամտային հարկի, եթե նրանք նույնիսկ գյուղատնտեսական հարկ են վճարում՝ իրենց գյուղական տնտեսության եկամուտների համար: Ինչ վերաբերում է գյուղական վայրերում աշխատող այլ բանվորներին և ծառայողներին, նրանք նույնպես ենթակա են եկամտային հարկի, եթե գյուղում տնտեսություն չունեն և գյուղհարկ չեն վճարում:

## 3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՅԵՎ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ՀԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

Աշխատավարձի և կենսաթոշակի հարկադրումը կատարվում է հատուկ կարգով, որը հիմնովին տարբերվում է եկամտահարկի ուղղագրման ընդհանուր կարգից, որով հարկվում են բանվորների և ծառայողների այլ աղբյուրներից ստացած եկամուտները և հարկատուների մյուս բոլոր խմբերի ունեցած եկամուտները:

Հարկադրման հատուկ կարգը անհրաժեշտ է լավ յուրացնել բոլոր հիմնարկների և ձեռնարկությունների այն աշխատակիցներին, որոնք կիրառում են կյանքի մեջ աշխատավարձի և կենսաթոշակի հարկումը: Վերջինս ճիշտ և անսխալ կատարելու համար անհրաժեշտ է պարզ պատկերացնել բանվորների և ծառայողների աշխատավարձի հարկման հատուկ կարգի հիմնական սկզբունքները և այն բոլոր առանձնահատկությունները, որոնցով նա տարբերվում է ընդհանուր կարգից: Հարկման համար գոյություն ունեցող այդ երկու ձևերի համեմատությունն օգտակար կլինի և կնպաստի աշխատավարձի հարկադրմանը գիտակցորեն մոտենալուն:

1. Ուղղակի հարկերի տեսչությունն յուրաքանչյուր շրջանում

գոյություն ունեն շրջհարկային հանձնաժողովներ տեսչի նախագահությամբ, վորոնք վորոշում են յուրաքանչյուր հարկատուի ստուգագրման յենթակա բոլոր յեկամուտները, ինչ աղբյուրներից էլ նրանք գոյացած լինեն, բացի աշխատավարձից և կենսաթոշակից: Իսկ վերջինները, ինչպես ասված է վերևում, հարկադրվում են այն հիմնարկները և ձեռնարկությունները, վորոնք աշխատավարձ կամ կենսաթոշակ են վճարում:

2. Յեկամտային հարկի սկզբունքներից մեկն այն է, վոր յուրաքանչյուր հարկատուի բոլոր աղբյուրներից ստացված յեկամուտները գումարվում են և միասին հարկադրվում իբրև մի ընդհանուր համաքանակ յեկամուտ: Բանվորների և ծառայողների հարկադրումը շեղվում է այդ հիմնական սկզբունքից նրանով, վոր յուրաքանչյուր աղբյուրից ստացված յեկամուտը հարկվում է առանձին, յեթե նա առանձին վերցրած՝ առանց այլ աղբյուրներից ստացված յեկամտի, ավելի յե չհարկադրվող մինիմումից: Յուրաքանչյուր բանվորի և ծառայողի ամեն մի հիմնարկության կամ ձեռնարկության մեջ ստացվելիք աշխատավարձը հարկադրվում է նրանցից յուրաքանչյուրում առանձին, յեթե նրանք մի քանի տեղ են աշխատում: Իսկ յեթե բանվորը կամ ծառայողը ունեցել է յեկամուտ բացի աշխատանքից նաև այլ աղբյուրներից, այդ դեպքում աշխատավարձը հարկվում է առանձին՝ վարձողի կողմից, իսկ մյուս յեկամուտները՝ սեփականությունից, արհեստից, առևտրից, ազատ պրոֆեսիաներից, և այլն, ստուգագրվում են շրջանային հանձնաժողովներում ընդհանուր կարգով:

3. Յեկամտային հարկի ստուգագրման համար ընդհանրապես վերցվում է յուրաքանչյուր հարկաշրջանում հարկատուի նախկին տարում ստացած յեկամուտը, վորովհետև հարկումը կատարվում է ընթացիկ տարվա սկզբին, յերբ դեռ չի կարելի վորոշել ընթացիկ հարկային տարվա յեկամուտը: Այդպիսով ընդհանուր կարգով յուրաքանչյուր տարվա հարկը, սահմանվում է նախկին տարվա յեկամուտի հիման վրա, այն ինչ աշխատավարձը հարկադրրելիս հիմք է ընդունվում բանվորի կամ ծառայողի ընթացիկ ամսվա ստանալիք աշխատավարձը, հետևապես, յուրաքանչյուր ամսվա հարկման համար վերցվում է նույն ամսվա յեկամուտը:

4. Աշխատավարձի հարկադրման ժամանակաշրջանը նույնպես տարբերվում է ընդհանուր կարգով ստուգագրման հարկաշրջանից:

Հարկաչրջանը՝ դա այն ժամանակամիջոցն է, որի համար կատարվում է հարկումը: Յեկամտային հարկի տուրքագրումը ընդհանրապես տարեկան է և հարկային տարին ընդգրկում է նույն ժամանակամիջոցը, ինչ որ բյուջետային տարին—այսինքն հոկտեմբերի 1-ից մինչև սեպտեմբերի 30-ը ներառյալ: Ընդհանուր կարգով յուրաքանչյուր հարկատու տուրքագրվում է տարին մեկ անգամ, իսկ աշխատավարձը և կենսաթոշակը հատուկ կարգով տուրքագրվում են ամեն ամիս, հետևապես տարին տասներկու անգամ:

5. Ընդհանուր կարգով տուրքագրված հարկատուները ստանում են հատուկ ծանուցումներ իրենցից պահանջվող յեկամտահարկի գումարի մասին, և պարտավոր են ժամանակին մուծելու հարկը Պետական բանկի դրամարկղները, իսկ հատուկ կարգով տուրքագրված բանվորներից, ծառայողներից և պետական կենսաթոշակառուներից հարկի գումարները պահում են յուրաքանչյուր ամիս հիմնարկները և ձեռնարկությունները՝ աշխատավարձ կամ կենսաթոշակ վճարելիս:

6. Յեկամտահարկին յենթարկված բոլոր հարկատուները իրենք են կրում հարկը ժամանակին չմուծելու ամբողջ պատասխանատվությունը և իրենք են կրում գանձատվության դեպքում տուժման բոլոր միջոցները, այն ինչ բանվորներից և ծառայողներից ժամանակին հարկը չպահելու, կամ Պետական բանկի դրամարկղը չմուծելու համար պատասխանատու յեն բացառապես վարձողները:

Սրանք են ընդհանուր առմամբ ըստ յեկամտահարկի կանոնադրության գոյություն ունեցող հիմնական տարբերությունները հարկման յերկու ձևերի մեջ, որոնք ավելի ընդգծում են աշխատավարձի տուրքագրման հատուկ կարգի առանձնահատկությունները:

## 4. ԻՆՉՆ Է ՀԱՐԿԱԴՐՎՈՒՄ

Յուրաքանչյուր հարկ ունի իր առարկան, օբյեկտը, որը և հարկադրվում է:

Յեկամտային հարկի առարկան է հարկատուի ստացած յե-

կամուտը: Բանվորների, ծառայողների և գյուղական կենսաթոշակառուների՝ եկամուտը նրանց ստացած բոլոր տեսակի աշխատավարձը, կամ կենսաթոշակն է: Դա նրանց ընդհանուր եկամուտն է, որը տարբերվում է հարկման ենթակա, կամ այսպես կոչված «հարկադրվող եկամուտից», այսինքն, ընդհանուր եկամուտի այն մասից, որը հաշվի չի առնվում տուրքագրման ժամանակ:

*Աշխատանքից կամ ծառայությունից ստացած ընդհանուր եկամուտը կազմում են՝*

ա) բանվորի և ծառայողի ստացած բոլոր տեսակի աշխատավարձի գումարը (հիմնական վարձ, արտաժամյա աշխատանքի վարձատրություն, պարբերաբար վճարվող պրեմիալ վարձատրություն, բնավորման վարձ, անձնական հավելումներ, և այլն):

բ) խրախուսիչ վարձատրության գումարը, տանտյեմները և պարգևավորումները (Կան. հոդ. 17):

Խրախուսիչ վարձատրությունը, տանտյեմը, պարգևատրումը, արտաժամյան, պրեմիան, բնավորման վարձը և անձնական հավելումը կցվում են այն ամսվա աշխատավարձին, երբ նրանք վճարվում են:

Եթե այդ վճարումները արվում են մի քանի ամիսների համար միանվագ, այն դեպքում համապատասխան անցած ամիսների հարկը վերահաշվվում է համաձայն այդ ամիսներին ընկնող եկամուտի գումարների (Հրահ. § 184):

Օրինակ 1. *Մի ծառայող Երևանում ստանում է ռոճիկ ամսական 100 ռուբլի: 1928 թ. հունիս ամսին նա բացի ռոճիկից ստանում է նաև 20 ռ. նույն հունիս ամսին կատարած արտաժամյա աշխատանքի համար:*

*Այդ դեպքում նրա հունիս ամսվա հարկը պետք է հաշվել իր այդ ամսում ստացած բոլոր տեսակի վարձատրության գումարից, այսինքն՝* 120 ռուբլուց:

Օրինակ 2. *Նույն ծառայողը նույն 1928 թ. հունիսին ստանում է բացի իր հիմնական 100 ռ. ռոճիկից նաև 45 ռ. պարգևավճար՝ 1928 թ. ապրիլ, մայիս և հունիս ամիսներին ծառայության մեջ իր ցույց տված արտակարգ ջանասիրության համար:*

*Այս վերջերրդ դեպքում հիշյալ 45 ռ. պարգևադրամը պետք է բաժանել համապատասխան ապրիլ, մայիս և հունիս ամիսների վրա, հաշվելով հարկը այդ ամիսների համար* (100+15)

—115 ռուբլի վարձատրությունից, և վերահաշվել ապրիլ և մայիս ամիսների հարկի գումարները:

Աշխատանքի կամ ծառայության ընթացիկ վարձատրությունը (բնակարան, վառելիք, լուսավորություն, և այլն) ավելացվում է նույն ամսում ստացված վաստակին՝ յուրաքանչյուր ամսվա նրա արժեքի չափով (հրահ. § 185):

Բանվորի կամ ծառայողի ստացած ընթացիկ վարձատրության արժողությունը վորոշվում է համաձայն այն գների, վորոնք նախատեսված են հավաքական պայմանագրերով, իսկ այդպիսի գների բացակայության դեպքում—համաձայն վճարման պահին գոյություն ունեցող տեղական գների:

Բանվորներին և ծառայողներին տրամադրված բնակարանները և կոմունալ սպասարկությունները գնահատվում են՝ բնակելի տարածության վարձը—տվյալ վայրում սահմանված բնակարանային վարձի տարիֆի չափով, իսկ կոմունալ սպասարկությունները (ջրմուղ, լուսավորություն, և այլն)—ըստ փաստական արժեքի, սակայն աշխատավարձի 10 տոկոսից վոչ ավելի (հրահ. § 186):

Արտադրության վորոշ առանձնահատկությունների շնորհիվ տրվող ընթացիկ այն բավարարումը, ինչպես կաթի ամենօրյա բաշխումը առանձնապես վնասակար արդյունաբերություններում, բանվորների և ծառայողների ընթացիկ վարձատրության մեջ չի հաշվվում (հրահ. § 187):

Վարձու աշխատանքից և ծառայությունից ստացվող ընդհանուր յեկամտի մեջ հաշվի չեն առնվում համաձայն յեկամտահարկի կանոնադրության 18 հոդվածի՝

ա) սոցապահովագրության նպաստները.

բ) անմիջապես վարձողների կողմից և նրանց հաշվին բանվորներին և ծառայողներին բժշկվելու համար տրվող նպաստները.

գ) չօգտագործված արձակուրդի փոխհատուցումը.

դ) գործուղումների և տեղափոխությունների ժամանակ համաձայն աշխատանքի օրենսդրության տրվող գումարները.

ե) ծառայության գործերով շրջագայությունների ժամանակ վարձողների կողմից բանվորներին և ծառայողներին տրվող յերկաթուղու և տրամվայի տոմսերի արժեքը, ինչպես նաև փոխադրանքի աշխատակիցներին և նրանց ընտանիքներին տրվող ձրի տոմսերի արժեքը.

գ) աշխատանքի մեջ սեփական գործիքների և արտահագուստի օգտագործման համար ստացվող փոխհատուցումը.

ե) աշխատանքային պայմանագրի լուծման ժամանակ աշխատանքի օրենսդրության համաձայն տրվող արձակման նպաստը.

ը) կլիմայական հավելումները:

Այսպիսով վորոշվում է բանվորների և ծառայողների աշխատանքից կամ ծառայությունից ստացած ընդհանուր յեկամուտը: Սակայն այդ ընդհանուր յեկամուտը դեռ հարկադրման առարկա չէ, վորովհետև այդ գումարից պետք է դուրս հանել այն գումարները, վորոնք օրենքով յենթակա չեն յեկամտահարկի: Այդ հանումները անելուց հետո նոր կստացվի այն հարկադրվող յեկամտի գումարը, վորից պետք է հաշվել հարկը:

Համաձայն յեկամտահարկի կիրառման հրահանգի § 188-ի, բանվորների, ծառայողների և պետական կենսաթոշակառուների յեկամտից դուրս են հանվում տվյալ ամսում հասարակական կազմակերպություններին նրանց տված անդամավճարները (նույն թվում պրոֆմիության և կուսակցական), յեթե այդ անդամավճարները գերազանցում են ընդհանուր յեկամտի 10 տոկոսը:

Յեթե հիշյալ անդամավճարները մուծվում են մի քանի ամիսների համար միանվագ, յեկամտից դուրս է հանվում այն գումարը, վորը վերաբերում է հարկադրման ամսին:

Բանվորների և ծառայողների՝ իրենց և իրենց ընտանիքի անդամների կյանքի ապահովագրման համար կատարած պրեմիաների վճարելու ծախսերը դուրս են հանվում յեկամտից, յուրաքանչյուր տարվան հասանելիք վճարների մեկ 12-ական չափով, բայց ամսական 25 ռուբլուց վոչ ավելի (հրահ. § 189):

Հարկատուի մի քանի տեղերում հարկադրվելու դեպքում, թե անդամավճարների և թե ապահովագրման վճարների հանումը կատարվում է միմիայն մի տեղում ըստ հարկատուի ընտրության:

## 5. ՀԱՐԿՄԱՆ ՏԵԽՆԻԿԱՆ

Հարկատուների ճիշտ հաշվառումը և նրանց լրիվ ընդգրկումը հանդիսանում է հարկադրման աշխատանքների հիմնական մասերից մեկը: Այդ հաշվառման գլխավոր նպատակն այն է, վոր հարկման

յենթակա բանվորներից և ծառայողներից վոչ մեկը չվրիպի տուր-քադրումից :

Վարչական աշխատավարձի հարկադրումը կատարվում է յուրաքանչյուր ամիս, ըստ որում ամեն մի հարկային ամսվա համար պետք է կազմել հատուկ հաշվառման ցուցակ ըստ սույն որոշմանը կցված հավելված 2-րդ ձևով : Այդ ցուցակի մեջ գրանցվում են յուրաքանչյուր ամսի վերջին որը հիմնարկի կամ ձեռնարկության մեջ գտնվող, վերջիններիս կողմից ապահովագրված բոլոր վարձու բանվորները և ծառայողները, ինչպես նաև պետական կենսաթոշակառուները, անկախ նրանից՝ յենթակա յեն նրանք յեկամտահարկի տուրքադրման, թե վոչ :

Հավելված 2-րդ ցուցակը կարելի յե չկազմել և բավականանալ յուրաքանչյուր հիմնարկի կամ ձեռնարկության մեջ կազմվող ռոճիկացուցակներով միմիայն այն դեպքում, յեթե այդ ռոճիկացուցակներում դուրս են գրվում միաժամանակ թե աշխատավարձը, թե բոլոր այլ տեսակի վարձատրությունները, և յեթե այդ ցուցակի տվյալները բավարարում են հավելված 2 ցուցակի բոլոր պահանջներին :

Հաշվառման ցուցակները կազմելուց հետո նրանցում, կամ համապատասխան դեպքերում ռոճիկացուցակների մեջ, պետք է առանձնացնել այն անձանց, վորոնց ստանալիք բոլոր տեսակի աշխատավարձի գումարը գերազանցում է չհարկվող մինիմումը :

Չհարկվող մինիմումի նորմաները կիրառելիս, հարկին յենթակա յեկամտի գումարները հաշվի յեն առնվում լրիվ ռուբլիներով, դեն գցելով 50-ից պակաս կոպեկները, և 50-ից ավելի կոպեկները ընդունելով իբրև ամբողջ ռուբլիներ :

Այն անձանցից, վորոնց յեկամուտը գերազանցում է չհարկվող մինիմումից, պետք է ջնջել նույնպես նրանց, ովքեր ազատվում են հարկից անկախ իրենց ունեցած յեկամտի չափից, իսկ մնացածներին պետք է մտցնել հատուկ հարկադրման ցուցակի մեջ (հավելված 3) :

Հավելված 2-րդ և 3-րդ ցուցակների տվյալները պետք է համապատասխանեն հիմնարկներում և ձեռնարկություններում տարվող անձնական կազմի շարժման մասին հրամաններին, կամ նրանց փոխարինող մատյանին, ինչպես նաև ռոճիկացուցակներին, անհատական պայմանագրերի և պահանջագրերի տվյալներին :

Հարկվող բանվորների, ծառայողների և պետական կենսաթոշակառուների վերահիշյալ ձևով գրանցումից և նրանց հարկադրվող

յեկամուտները փոքրերից հետո, պետք է անցնել հարկը հաշվելու աշխատանքին։

Դրա համար գոյություն ունի ըստ յեկամտահարկի կանոնադրության 7-դ հոդվածի № 1ա հարկադրույքների տախտակը, վորը կցված է սույն ժողովածուին (հավելված 4)։ Այդ տախտակում յեկամտի յուրաքանչյուր գումարի դիմաց ցույց է տրվում պահանջվող հարկի չափը։ Նրանով հաշվվում են յեկամտահարկի հիմնական դըրույքները, այսինքն այն հարկը, վորը գնում է պետության օգտին, վորի պատճառով հիմնական հարկը կոչվում է նաև պետական հարկ։

Բացի պետական հարկի դրույքից, պետք է հաշվել նաև նրա հավելումը հօգուտ տեղերի, վորը կազմում է առաջինի 25 տոկոսը և գանձվում է հիմնական հարկի հետ միասին։

Վարձող հիմնարկների և ձեռնարկությունների աշխատավարձի և կենսաթոշակի հարկման գործը դյուրացնելու համար սույն բրոշյուրին (հավելված 5-րդ) կցված է նաև յեկամտի յուրաքանչյուր գումարից արդեն հաշված հարկի դրույքների տախտակ, վորից նրանք մեքենայաբար, առանց թվաբանական գործողություններ կատարելու, կարող են վերցնել հարկի գումարները։

Յեթե հարկը հաշվելիս ստացվում են կոպեկների կոտորակներ, այդ դեպքում հարկադրույքների կես կոպեկից պակաս կոտորակները դեն են գցում, իսկ կես և ավելի կոտորակները հաշվվում են իբրև լրիվ կոպեկներ։

Հիմնարկներից և ձեռնարկություններից վորևէ պատճառով դուրս յեկող բանվորների և ծառայողների հարկադրումը կատարվում է ըստ հեռացման ժամանակ նրանց վճարվող աշխատավարձի ընդհանուր հիմունքներով, վորը անմիջապես պահվում է վճարվելիք գումարներից։ Սակայն, նույն հիմնարկության միևնույն քաղաքում գտնվող այլ բաժին կամ վարչություն տեղափոխվելը հեռացում չի համարվում։

## 6. ՅԵԿԱՄՏԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հարկային արտոնություններ տալով պետք է հասկանալ հարկի գումարի այն զեղչումները, վորոնք արվում են հարկատուների վո-

բաց կառեգործանների նկատմամբ համաձայն յեկամտահարկի կանոնադրության :

Հարկային արտոնությունը տարբերվում է սույն բրոշյուրի յերկրորդ բաժնում հիշված հարկային բացառություններից նրանով, վոր բացառության յենթակա անձինք բոլորովին չեն հարկադրվում, իսկ արտոնությունով օգտվողները հարկը վճարում են, բայց ավելի պակաս չափով քան մյուսները :

Համաձայն կանոնադրության 10-րդ հոդվածի այն բանվորները, ծառայողները և պետական կենսաթոշակառուները, վորոնց խնամքի տակ գտնվում են յերկուսից ավելի անձինք, օգտվում են հետևյալ արտոնություններով՝ —յերեք անձ խնամող հարկատուների համար հաշվարկված հարկի գումարը պակասեցվում է մի քառորդով, իսկ չորս և ավելի անձ իրենց խնամքի տակ ունեցող հարկատուների հարկը պակասեցվում է մի յերրորդով : Այսպիսով, առաջինները վճարում են իրենց հարկի 75 տոկոսը, իսկ յերկրորդներից պահանջվում է հարկի $66^2/_3$ տոկոսը :

Սակայն, այդ արտոնությունը չի տրվում այն հարկատուներին, վորոնք տվյալ հիմնարկի կամ ձեռնարկության մեջ, ուր կատարվում է ուրքագրումը, աշխատավարձից կամ կենսաթոշակից ամսական յեկամուտ են ստանում 350 ռուբլուց ավելի :

Հետևապես, այն բանվորները և ծառայողները, վորոնք յեկամտահարկ են վճարում մի քանի հիմնարկներում կամ ձեռնարկություններում, օգտվում են կանոնադրության 10-դ հոդվածում նախատեսված արտոնությունով աշխատանքի կամ ծառայության յուրաքանչյուր տեղում առանձին, յեթե ամեն մի տեղում ստացած յեկամուտը առանձին չի գերազանցում հիշյալ մաքսիմումը :

Ուրեմն, ըստ ընտանեկան դրության արտոնություն տալու համար անհրաժեշտ են յերկու պայմաններ՝ նախ, վոր հարկատուն ունենա իր խնամքի տակ յերկուսից ավելի անձ, և հետո, վոր հարկադրող հիմնարկից կամ ձեռնարկությունից ստացվող ամսական յեկամուտը 350 ռուբլուց ավելի չլինի :

Օրինակ 1 : Ծառայողը ստանում է ամսական 140 ռ. ռոճիկ : Նրա խնամքի տակ են կինը և յերկու յերեխաները :

Ըստ № 1ա գրույքատախտակի նա պետք է վճարեր համաձայն իր յեկամտի յեկամտահարկ՝ պետական—1 ռ. 17 կ. և հոգուտ տեղերի 29 կ., ընդամենը 1 ռ. 46 կ., այնինչ նրա հարկը, իբրև յերեք անձ խնամողի, պակասում է 25 տոկոսով և նա վճարում է յեկամտ-

տուհարկ՝ պետական 88 կ., հողուտ տեղերի 22 կ., ընդամենը 1 ռ. 10 կ.:

Օրինակ 2-րդ: *Բանվորը ստանում է աշխատավարձ ամսական 110 ռ. և խնամում է հինգ անձ:*

*Այդ բանվորի հարկը՝ պետական 78 կոպ., տեղական 20 կոպ.-ի փոխարեն կլինի՝ պետական 52 կ. և հողուտ տեղերի 13 կ., վորովհետև նա պետք է վճարի հարկի 2/3 մասը:*

*Կանոնադրության 10-րդ հոդվածով նախատեսված արտոնություններ տրվում է այն հարկատուներին, վորոնք փաստորեն պահպանում են խնամվող անձերի գոյությունը և նրանց ու հարկատուի մեջ ազգակցական կապերի գոյությունն այդ դեպքում անհրաժեշտ չէ (Հրահ. § 218):*

*Խնամվողներ համարվում են այն անձինք, անկախ նրանց հասակից և աշխատավայրից, վորոնք չունեն իրենց գոյության հնարավորություններ ապահովող յեկամտի աղբյուրներ:*

*Այն անձինք, վորոնք նպաստ են ստանում աշխատանքի բերացից կամ սոցիալական ապահովագրության կարգով, խնամվողների թվին չեն պատկանում (Հրահ. § 219):*

*Միասնական գյուղատնտեսական հարկ վճարողներից, վորոնք յենթակա յեն նաև յեկամտահարկի, օգտվում են Կանոնադրության 10-րդ հոդվածում նախատեսված արտոնությունով միմայն այն դեպքում, յեթե նրանք խնամում են յերկու անձից ավելի, և յեթե վերջինները չունեն ինքնուրույն յեկամուտներ ու հաշվի չեն առնված վորպես ուտողներ գյուղհարկի տուրքադրման ժամանակ (Հրահ. § 220):*

*Կանոնադրության 10-րդ հոդվածով նախատեսված արտոնությունը ստանալու համար յեկամտահարկ վճարող բանվորները և ծառայողները պետք է ներկայացնեն իրենց հարկող հիմնարկին կամ ձեռնարկության տեղեկանք, քաղաքներում անձնային վարչություններից, գյուղական վայրերում գյուղխորհրդից, նրանց խնամքի տակ գտնվող անձանց մասին: Այդ տեղեկանքների մեջ պետք է ցույց տրվի խնամվողների թիվը ըստ նրանց առկայության առ 1 հոկտեմբերի, այսինքն ընթացիկ բյուջետային տարվա սկզբին:*

*Վորովհետև Հայաստանի քաղաքներում գոյություն չունեն անձնային վարչություններ, ուստի այդ տեղեկանքները տալիս են տնատերերը, վորոնց ստորագրությունները պետք է վավերացված լինեն Միլիցիայի համապատասխան Վարչության կողմից:*

Ինչպես աշխատավարձի գյուղհարկով ազատված լինելու դեպքում բացառությունները, նույնպես և յերկուսից ավելի խնամվող անձեր ունենալու հետևանքով—արտոնությունները կիրառվում են այն անձանց կողմից, վորոնք հաշվարկում են հարկի գումարը, հիմնվելով հարկատուների կողմից ներկայացրած համապատասխան, արդեն հիշված, տեղեկանքների վրա:

Ըստ ընտանեկան դրության արտոնություն ստանալու համար հարկատուները խնամվող անձերի մասին տեղեկանքներ ներկայացնում են հունվարի 10-ից վոչ ուշ, իսկ այդ անձերի թվի մեջ բյուջետային տարվա ընթացքում փոփոխություններ տեղի ունենալու դեպքում վոչ ուշ, քան հարկի գանձումից 10 որ առաջ:

Աշխատավարձը գյուղհարկով ազատված լինելու մասին տեղեկանքները ներկայացվում են յուրաքանչյուր տարի վոչ ուշ ոգոստոսի 10-ից:

Հիմնարկները և ձեռնարկությունները հարկատուների խնամքի տակ գտնվող անձանց մասին ստացած տեղեկանքները պետք է ստուգեն, համեմատելով նրանց հաշվեգրքույկների (ապահովագրքույկների) հետ:

Արտոնությունների կիրառումը կատարվում է հարկի գումարների հաշվարկման գործողությունից անմիջապես հետո, վորով վերջանում են հարկադրման տեխնիկական աշխատանքները, և հարկադրման հավելված 3-րդ ցուցակում պատրաստ են լինում բոլոր հարկատուներից պահանջվող հարկի դրույքները:

## 7. ՀԱՐԿԻ ԳԱՆՁՈՒՄԸ

Բանվորների, ծառայողների և պետական կենսաթոշակառուների աշխատավարձից և կենսաթոշակից հաշվարկված յեկամտահարկը գանձվում է յուրաքանչյուր ամիս վճարվելիք աշխատավարձից կամ կենսաթոշակից հարկի գումարների պահման միջոցով: Պահումները կատարում են հիմնարկները, ձեռնարկությունները և տնտեսությունները իրենց այն աշխատակիցների միջոցով, վորոնք կատարում են աշխատավարձի կամ կենսաթոշակի վճարումները:

Յեթե աշխատավարձը վճարվում է ամիսը մի քանի անգամ, այդ դեպքում հարկը պահվում է յուրաքանչյուր ամսվա վերջին վճարումից (Հրահ. § 196):

Ինչպես հիշված է սույն բրոշյուրի առաջին գլխում, բանվորների, ծառայողների և պետական կենսաթոշակառուների, բացի աշխատավարձից և կենսաթոշակից, ունեցած այլ աղբյուրների եկամուտը հարկադրվում է ընդհանուր կարգով շրջհարկային հանձնաժողովներում: Այդ եկամուտներից հաշվարկված հարկը ըստ հարկատուների ցանկության նույնպես գանձվում է ընդհանուր կարգով, անկախ սուբքաղված աշխատավարձի հարկից:

Եթե բանվորները ծառայողները և պետական կենսաթոշակառուները ցանկություն չեն հայտնի իրենց կողմնակի եկամուտների հարկը ընդհանուր կարգով վճարելու, այդ դեպքում ուղղակի հարկերի տեսուչները համապատասխան ծանուցումներ են ուղարկում հիմնարկներին և ձեռնարկություններին, որոնցում աշխատող կամ կենսաթոշակ ստացող հարկատուներից պահանջվող հարկի գումարների մասին:

Հիշյալ ծանուցումները ուղարկում են համապատասխան ուղղակի հարկերի տեսուչները՝ շրջանային հանձնաժողովում հարկադրվող եկամուտները վորոշելուց և տեսչության կողմից հարկի գումարները հաշվելուց անմիջապես հետո, յուրաքանչյուր տարի փետրվարի 15-ից վոչ ուշ:

Այն բանվորները, ծառայողները և պետական կենսաթոշակառուները, վորոնք նախընթաց տարում կողմնակի աղբյուրներից եկամուտ են ունեցել, այդ եկամուտների համար սահմանված մինիմումից ավելի, պարտավոր են հայտարարություն (դեկլարացիա) տալ համապատասխան շրջհարկային հանձնաժողովին իրենց ունեցած եկամուտների մասին: Նրանց իրավունք է վերապահվում այդ դեկլարացիաների մեջ հայտնելու, վոր իրենք ցանկանում են իրենց կողմնակի եկամուտների հարկի մասին ծանուցումը ստանալ և այդ հարկը վճարել ընդհանուր կարգով: Այդպիսի դեպքերում հիշյալ անձանց կողմնակի եկամուտների հարկի գանձման մեջ նրանց աշխատավարձ հարկող հիմնարկները և ձեռնարկությունները չեն մասնակցում:

Հակառակ դեպքում վարձողները պարտավոր են, համաձայն ուղղակի հարկերի տեսչությունից ստացած ծանուցումների, գանձել նրանցում նշանակված հարկի գումարները յուրաքանչյուր ամիս հավասար մասերով այն ժամանակվա ընթացքում, վորը մնում է ծանուցումը ստանալու օրից մինչև ընթացիկ տնտեսական տարվա վերջը: Այդ գանձումները նույնպես կատարվում են աշխատա-

վարձի կամ կեսամթաշակի ընթացիկ վճարումներից պահումներ անելու միջոցով, վորոնք սկսվում են ծանուցումը ստանալուց հետո հենց առաջին վճարումից։

Յեթե ծանուցումներում նշանակված հարկի պահանջվող գումարը չի կարելի ծածկել հարկատուի աշխատավարձի կամ կենսաթոշակի 20 տոկոսը պահելով յուրաքանչյուր ամիս մինչև տոմարագրական տարվա վերջը, և հարկատուն հայտարարություն չի տա վարձողին՝ պահումներն այն չափով կատարելու մասին, վորը անհրաժեշտ ե հարկագումարը լրիվ ծածկելու համար, այդ դեպքում պահումները կատարվում են աշխատավարձի 20 տոկոսի չափով։ Մինույն ժամանակ վարձողները պարտավոր են այդպիսի պարտադրյալ հաղորդել ուղղակի հարկերի տեսուչին, թե ինչ գումար կգանձվի այդ ձևով հարկատուից, մնացած գումարը ընդհանուր կարգով սահմանված ժամկետներին գանձելու համար։

Համենայն դեպս աշխատավարձի 20 տոկոսից ավելի գանձումներ անել չի կարելի։

Համաձայն յեկամտահարկի կիրառման Հրահանգի № 199-ի, յեկամտային հարկի պահումները չի կարելի կատարել լրիվ կամ մասամբ նաև հետևյալ գումարներից՝

ա) վորոնք տրվում են սոցիալական ապահովագրության կարգով.

բ) համաձայն Աշխատանքի Օրենսգրքի 81 և 82 հոդվածների, գործուղումների և տեղափոխումների ժամանակ տրվող ուղեվարձից, օրապահիկից և նպաստներից.

գ) վորոնք տրվում են իբրև փոխհատուցում չոգտագործված արձակուրդի և բանվորին պատկանող գործիքների մաշվելու, արտահագուստի և արտակաթի համար.

դ) հեռացման ժամանակ տրվող արձակման նպաստից։

Յեթե հիշյալ արգելքների հետևանքով պահանջվող կողմնակի յեկամուտների հարկի վորևե մասը մնա չգանձված, այդ դեպքում չգանձված գումարը դասավորվում և մնացած ամիսների վրա մինչև տոմարագրական տարվա վերջը և պահվում և այդ ամիսների պահումների հետ միասին։

Ընդհանուր կարգով հարկադրված կողմնակի յեկամուտներ ունեցող բանվորների և ծառայողների արձակման դեպքում մինչև հարկի լրիվ գանձումը, հիմնարկները, ձեռնարկությունները և տնտեսությունները պարտավոր են հայտնել համապատասխան

ուղղակի հարկերի տեսչին նրանց ցուցակները, ցույց տալով նրանցից պահանջվող գումարները՝ ընդհանուր կարգով գանձելու համար:

Հիմնարկները և ձեռնարկությունները բանվորներից, ծառայողներից և պետական կենսաթոշակառուներից յեկամտահարկի պահումը կատարելիս, համապատասխան նշանակումներ են անում այդ մասին աշխատավարձի կամ կենսաթոշակի պահանջաթերթերում և հաշվեգրքույկի կամ թոշակային գրքույկի մեջ, ընդ որում ընդհանուր կարգով ուղարկված յեկամուտների հարկի պահված գումարները նշանակվում են առանձին:

Ընթացիկ բյուջետային տարվա շրջանում սխալ հարկադրման կամ բոլորովին չհարկադրելու դեպքեր հայտնաբերելիս, վարձողները պարտավոր են վերահաշվել հարկը համապատասխան ամիսների համար: Նորից հաշված հարկի տարբերությունը պետք է գանձվի մինչև ամարտադրական տարվա վերջը մնացած ամիսների ընթացքում, առանց խախտելու Հրահանգի § 199-ի հիշված պահանջը, հարկի պահումները աշխատավարձի 20 տոկոսից չգերազանցելու մասին:

Յեթե հարկատուները աշխատանքի կամ ծառայության են փոխադրվել այլ հիմնարկներ կամ ձեռնարկություններ, վերահաշված հարկի լրացուցիչ գումարի գանձման մասին նախկին վարձողները պահանջ պետք է ուղարկեն այդ հիմնարկներին և ձեռնարկություններին:

Հեռացված բանվորներից և ծառայողներից վերահաշված հարկի լրացուցիչ գումարները գանձելու մասին վարձողները պարտավոր են հայտնել համապատասխան հարկային տեսչին, ըստ հարկատուի բնակավայրի:

Հարկադրման սխալների և վրիպումների ուղղումը վարձողների կողմից նրանց չի ազատում պատասխանատվությունից՝ թույլ տրված սխալների և վրիպումների համար:

Նախկին տարիներում հարկադրումից վրիպած բանվորների, ծառայողների և պետական կենսաթոշակառուների տուրքադրումը կատարվում է ընդհանուր կարգով համապատասխան շրջհարկային հանձնաժողովի կողմից, իսկ հարկի գանձումը կատարվում է նույն կարգով, որով գանձվում է հարկը ընթացիկ տարվա ընթացքում վրիպածներից:

## 8. ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

Այն բանվորները, ծառայողները և պետական կենսաթոշակառուները, վորոնք գտնում են, վոր նրանց յեկամտահարկը ուղիղ չէ հաշվարկված, հարկի պահման որից յերկու շաբաթվա ընթացքում կարող են բողոքել այդ մասին այն ուղղակի հարկերի տեսչին, վորի շրջանում կատարված է հարկումը:

Հարկային տեսուչներն այդ բողոքների հետևանքով կազմում են իրենց վորոշումները, վորոնք հայտնվում են հարկատուներին:

Այդ վորոշումները հայտնելուց մեկ ամսվա ընթացքում հարկատուները կարող են բողոքարկել նրանց ուեղական շրջհարկային հանձնաժողովին, վորի վորոշումները նույնպես կարելի յե բողոքարկել ընդհանուր կարգով:

Հիմնարկները, ձեռնարկությունները և տնտեսությունները պարտավոր են տալու բանվորներին, ծառայողներին և պետական կենսաթոշակառուներին ըստ նրանց պահանջի տեղեկանքներ՝ նրանց վրա հաշվարկված և նրանցից գանձված յեկամտահարկի գումարների մասին (Հրահ. § 193):

## 9. ԳԱՆՁՎԱԾ ՀԱՐԿԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ՅԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հիմնարկները և ձեռնարկությունները բանվորներից, ծառայողներից և պետական կենսաթոշակառուներից պահած հարկի գումարները մուծում են կամ փոխադրում են փոստով Պետական բանկի մոտակա գրամարկղը, գանձելու ժամանակից յերեք որվա ընթացքում: Դրամի հետ միասին կցվում է նաև հատուկ դիմում հարկն ընդունելու մասին, կամ վճարման թերթիկ (հավելված 6-րդ):

Այն վայրերում, ուր չկան Պետբանկի գրամարկղային հիմնարկներ, և դրամափոխադրական գործառնություններ կատարող փոստային հիմնարկներ,—հարկի գումարները հանձնվում են Պետբանկի գրամարկղը կամ փոստը յոթն որվա ընթացքում:

Ընդհանուր կարգով հարկադրված կողմնակի յեկամուտներից հարկի գանձված գումարները մուծվում են վճարողների կողմից աշխատավարձի կամ կենսաթոշակի հարկից առանձին, ներկայացնելով ուղղակի հարկերի տեսչից ստացված համապատասխան ծանուցագրերը:

Հարկը հանձնելու հերթական ժամկետները պարտադիր են հարկը գանձող հիմնարկների և ձեռնարկությունների համար և կարող են յերկարացվել ծայրահեղ անհրաժեշտության դեպքում միմիայն դաշնակից հանրապետության ֆինժողկոմատի կողմից:

Հիմնարկները և ձեռնարկությունները պարտավոր են ներկայացնել համապատասխան ուղղակի հարկերի տեսչին յեկամտահարկի կիրառման Հրահանգին կցված № 7 ձևով հաշվետու տեղեկագրեր՝ բանվորներից, ծառայողներից և պետական կենսաթոշակառուներից յեկամտահարկի գանձման մասին: Տեղեկագրի № 7 ձևը կցված է սույն ժողովածուին, իբրև հավելված 7-րդ:

Հիշյալ տեղեկագրերը ներկայացվում են տարեկան յերկու անգամ՝ նոյեմբեր և մարտ ամիսների համար: Նոյեմբեր ամսվա տեղեկագրերը պետք է ներկայացվի հունվարի 1-ից, իսկ մարտ ամսվանը՝ մայիսի 1-ից ոչ ուշ:

## 10. ՅԵԿԱՄՏԱՀԱՐԿԻ ՃԻՇՏ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Յեկամտային հարկի կանոնների ճշտությամբ կատարելու վրա անմիջականորեն հսկում է այն շրջանի ուղղակի հարկերի տեսուչը, որ գանձվում են բանվորներին, ծառայողներին և պետական կենսաթոշակառուներին վարձատրող հիմնարկները և ձեռնարկությունները:

Այդ հիմնարկները և ձեռնարկությունները պարտավոր են պատշաճ կարգով պահելու աշխատավարձի և կենսաթոշակի հարկման, ինչպես նաև յեկամտահարկի գանձման բոլոր նյութերը և փաստաթղթերը ու անմիջապես ներկայացնելու հարկային հսկողության պատկանող անձանց, ըստ նրանց պահանջի:

Այդ պահանջները կարող են լինել թե ուղղակի հարկերի տեսչության կողմից, և թե Ֆինժողկոմատի Հարկային Վարչության այն աշխատակիցների կողմից, վորոնք վերջինից հանձնա-

բարության կատարման հիմնարկների և ձեռնարկությունների յե-կամտահարկի տուրքագրման գործունեությունը տալիս :

Ուղղակի հարկերի տեսուչը ստուգում է հիշյալ հիմնարկները և ձեռնարկությունները, հայտնաբերելու համար նրանցից աշխա-տողներին, վարձը խառավում են որենքով նրանց վրա դրված՝ բանվորներից, ծառայողներից և պետական կենսաթոշակառունե-րից յեկամտահարկի գանձման պարտականությունը կատարե-լուց: Տեսուչները հսկում են նույնպես հարկը ճիշտ հաշվելու, հարկի գումարների պահումները անելու և ժամանակին Պետ-բանկի գրամարկղները հանձնելու վրա:

Վերոհիշյալ հսկողությունը իրագործելու համար, ուղղակի հարկերի տեսուչներին իրավունք է վերապահված՝

ա) պահանջել համապատասխան հիմնարկներից, ձեռնարկու-թյուններից և անհատներից ներկայացնել ստուգման հա-մար անհրաժեշտ բոլոր տեղեկությունները.

բ) ստուգել ավյալներ հավաքել հիմնարկների և ձեռնարկու-թյունների գործավարությունից կամ առևտրական մատյաններից՝ նրանց մոտ ծառայող անձանց և վերջիններին արված աշխատա-վարձի մասին:

Յերբ ուղղակի հարկերի տեսուչը սխալներ է նկատում աշխա-տավարձի և կենսաթոշակի հարկման, կամ բացառությունները և արտոնությունները կիրառելու մեջ, նա առաջարկում է հիմնարկ-ներին և ձեռնարկություններին ուղղել թույլ տված սխալները: Տեսչի այդ առաջարկների և ցուցմունքների կատարումը պարտա-դիր է վարձողների համար:

## II. ՅԵԿԱՄՏԱՀԱՐԿԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՏՈՒԺՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Պետական հիմնարկների և ձեռնարկությունների ղեկավարնե-րը, բանվորներից և ծառայողներից հարկադրույքների պահումնե-րը չանելու և պահված հարկը ժամանակին ըստ պատշաճի չհանձ-նելու համար, յենթակա յեն պատասխանատվության կարգապա-հական և, համապատասխան դեպքերում, քրեական կարգով (կա-նոնադր. հոդվ. 57):

Պրոֆեսիոնալ և հասարակական կազմակերպությունների ղեկավարները, բանվորների և ծառայողների հարկադրման կանոնները խախտելու համար, յենթարկվում են նույն պատասխանատվության, որը սահմանված է պետական հիմնարկների և ձեռնարկությունների ղեկավարների համար:

Նույն պատասխանատվության են յենթարկվում հանցավորները՝ ակտային վարձատրությամբ աշխատողների մասին ձև № 2 տեղեկագիր, նմանապես ձև № 7 հարկադրման մասին հաշվետու տեղեկագիր Ֆինբաժնին չներկայացնելու կամ ուշ հանձնելու համար, ինչպես նաև կողմնակի, ընդհանուր կարգով հարկադրվող, յեկամուտներ ունեցող բանվորների և ծառայողների տված դեկլարացիաները Ֆինբաժին ներկայացնելու կանոնը խախտելու համար (Հրահ. § 228):

Պետական հիմնարկների և ձեռնարկությունների ղեկավարների դեմ կարգապահական և քրեական հետապնդում հարուցում են Հ. Ս. Խ. Հ. Ֆինժողկոմատը և շրջֆինբաժինները ըստ ուղղակի հարկերի տեսուչների ներկայացրած տեղեկության:

Բանվորներից և ծառայողներից հարկի գումարները ժամանակին չպահելու, պահված գումարները չհանձնելու, կամ սահմանված ժամանակից ուշ հանձնելու համար կոոպերատիվ ձեռնարկությունների ղեկավարները յենթակա յեն տուգանքի 75 ռուբլու սահմաններում, իսկ մասնավոր վարձողները—150 ռուբլու սահմաններում: Բացի այդ, հիշյալ անձինք պարտավոր են հատուցել պետական գանձարանի բոլոր վնասները (Կանոն. հոդ. 56):

Վարձողների կողմից բանվորների և ծառայողների հարկը պահելուց խուսափելու, այդ պահումները ժամանակին չկատարելու, հարկը ժամանակին Պետբանկի գրամարկղը չհանձնելու, կամ հարկի սխալ հաշվարկելու դեպքեր հայտնաբերելիս,—ուղղակի հարկերի տեսուչը կազմում է պաշտոնական արձանագրություն:

Այդ արձանագրությունները տեսուչը ներկայացնում է ՀՍԽՀ Ֆինժողկոմատին իր յեզրակացությամբ՝ հանցավորների համար նախատեսված տուգանքի չափի և անվիճելի կարգով գանձվելիք հարկերի գումարների մասին:

Այդ տուգանքները սահմանում է Հ.Ս.Խ.Հ. Ֆինժողկոմատը (Կանոն. հոդվ. 64):

Տուգանման մասին կայացրած վորոշումները համապատասխան հարկային հիմնարկները հաղորդում են դանցառուներին՝ նրանց հասուն ծանուցագրեր ուղարկելով:

Տուգանքը մուծվում է Պետբանկի գանձարկղային հիմնարկը ծանուցագրեր ստանալուց յերկու շաբաթվա ընթացքում, ներկայացնելով ստացած ծանուցագրերը:

Այդ ժամանակամիջոցում տուգանքը չմուծելու դեպքում, նրա գանձումը կատարվում է ստիպողական կարգով, համաձայն հարկերի գանձման կանոնադրության:

Տուգանման մասին ծանուցագրեր ստանալու որից յերկու շաբաթվա ընթացքում տուժման յենթարկված անձինք կարող են բողոք ներկայացնել Ֆինժողկոմատին տուգանման մասին կայացրած վորոշումները վերանայելու համար:

---

# ՀԱՎԵԼՎԱԾ 1

Ելից №..............

«........» ________ 192 թ.

*Ներկայացվում է տեղական ՖԻՆԲԱԺՆԻՆ վոչ ուշ նոյեմբերի 1-ից, Պետական Եկամտահարկի Կանոնադրության 29-րդ հոդվ. և Հրահանգի § 66 համաձայն:*

| 192 /2 թ. |
|---|

## ՏԵՂԵԿԱԳԻՐ

*Անցյալ հարկային տարում, 192 թ. Հոկտեմբերի 1-ից մինչև 192 թ. սեպտեմբերի 30-ը, տոկոսային վարձատրությամբ աշխատավարձ ստացած անձանց մասին*

................................................................................................ *մեջ*

*(Հիմնարկի և ձեռնարկության անվանումը)*

*Հիմնարկի կամ ձեռնարկության հասցեն՝*

Քաղաք / գավառ ________ ........ փողոց / շրջան ........ ........ № / գյուղ ........

| №№ ըստ կարգի | Անուն, հայրանուն, ազգանուն | Մանրամասն հասցեն առ 1/X 192 թ. | Տոկոսային վարձատր. գումարը |
|---|---|---|---|
| | | | |

ՀԱՎԵԼՎԱԾ 2

**ՀԱՇՎԱՌՄԱՆ ՑՈՒՑԱԿ**

*Բանվորների, ծառայողների և պետական կենսաթոշակառուների*

..............................................................................................................

*(հիմնարկի և ձեռնարկության անվանումը)*

*առ «..........» .............................................. 192 թ.*

| ՊՊ. ըստ կարգի | Աշխատավարձի տեսակները | | | | | | Հանումներ ըստ կանոնադրության ........ կետերի | Չեկավճարով ստացվելիք | ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | Ընդա-մենը | | | |
| | | | | | | | | | |

# ՀԱՎԵԼՎԱԾ 3

## ՀԱՐԿԱԴՐՄԱՆ ՑՈՒՑԱԿ

..............................................................................................................................................

(Հիմնարկի կամ ձեռնարկության անվանումը)

Բանվորների, ծառայողների և պետական կենսաթոշակառուների:

Ցուցակը կազմված է ըստ կարգ. ու «     » .............................. 192 թ.          192 թ. ............................ ամսվա համար:

| ՀՀ ըստ կարգի | Հարկատուի ազգանունը անունը հայրանունը և պաշտոնը | Աշխատավարձի տեսակները | | | | | | | | | Հանումներ հարկում. կանոն. և հրահ. հիման | Հարկվելիք եկամուտ | Հաշվված հարկի մեծությունը (տոկոսներով) | | Մուծման ամսաթիվ | Մուծված գումարը (տույժերի հետ) | | Մուծման անդորրագրի ՀՀ | Հարկային տեսչի նշումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Աշխատավարձի հիմնական դրույքը | Արտաժամյա աշխատանքի վարձ | Գոտիական տարբերություն | Աշխատանքային հավելավճարներ | Բնեղենով վճարված վարձ *) | Արձակուրդային վարձատրություն | Տանտյեմ | Պարգևատրում | Ընդամենը | | | Ռ. | Կ. | | Ռ. | Կ. | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | |

*) Բացի այն մասից, որը արվում է գործադրման ծախսերի փոխարեն:

# ՀԱՎԵԼՎԱԾ 4

*Յեկամտահարկի կանոնադրության*
*տողեր 2-րդ*

*Պետական յեկամտահարկի ամսական դրույքների*

## № I Ա ՏԱԽՏԱԿ

| Կարգ | Հարկադրվող յեկամուտի գումարը | ՀԱՐԿԻ ԴՐՈՒՅՔԸ |
|---|---|---|
| 1 | Մինչև 85 ռ. | 0,6% յեկամուտի գումարից |
| 2 | 85 ռ. » 100 » | 50 կ.+ 1%— 85 ռ. վեր գումարից |
| 3 | 100 » » 150 » | 65 »+ 1,3%— 100 » » » |
| 4 | 150 » » 200 » | 1 ռ. 30 »+ 2,0%— 150 » » » |
| 5 | 200 » » 250 » | 2 » 30 »+ 2,8%— 200 » » » |
| 6 | 250 » » 330 » | 3 » 70 »+ 3,0%— 250 » » » |
| 7 | 330 » » 410 » | 6 » 10 + 3,5%— 330 » » » |
| 8 | 410 » » 500 » | 8 » 90 »+ 5,5%— 410 » » » |
| 9 | 500 » » 585 » | 13 » 85 »+ 8,5%— 500 » » » |
| 10 | 585 » » 670 » | 21 » 08 »+11,5%— 585 » » » |
| 11 | 670 » » 830 | 30 » 86 »+15,5%— 670 » » » |
| 12 | 830 » » 1,000 » | 55 » 66 »+19,0%— 830 » » » |
| 13 | 1,000 » » 1,170 » | 87 » 96 »+22,5%—1,000 » » » |
| 14 | 1,170 » » 1,330 » | 126 » 20 »+25,0%—1,170 » » » |
| 15 | 1,330 » » 1,660 » | 166 » 20 »+27,0%—1,330 » » » |
| 16 | 1,660 » » 2,000 » | 255 » 30 »+29,0%—1,660 » » » |
| 17 | 2,000 » » — | 353 » 90 »+30,0%—2,000 » » » |

# ՀԱՎԵԼՎԱԾ 5

## ՕԺԱՆԴԱԿ ՏԱԽՏԱԿ

*Աշխատավարձից և կենսաթոշակից գանձվող չեկամտահարկի ամսական դրույքների ըստ № 1 ա դրույքատախտակի։*

**ՑԵԿԱՄՈՒՏԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ**

| 75—100 | | 100—150 | | 150—200 | | 200—250 | | 250—300 | | 300—350 | | 350—400 | | 400—450 | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ամբողջական վաստակից | Ամբողջական վիճակ | Ամբողջական վաստակից | Ամբողջական վիճակ | Ամբողջական վաստակից | Ամբողջական վիճակ | Ամբողջական վաստակից | Ամբողջական վիճակ | Ամբողջական վաստակից | Ամբողջական վիճակ | Ամբողջական վաստակից | Ամբողջական վիճակ | Ամբողջական վաստակից | Ամբողջական վիճակ | Ամբողջական վաստակից | Ամբողջական վիճակ |
| Ռուբ. | Ռ.կ. | Ռուբ. | Ռ.կ. | Ռուբ. | Ռ.կ. | Ռուբ. | Ռ.կ. | Ռուբ. | Ռ.կ. | Ռուբ. | Ռ.կ. | Ռուբ. | Ռ.կ. | Ռուբ. | Ռ.կ. |
| — | — | 100 | 0,65 | 150 | 1,30 | 200 | 2,30 | 250 | 3,70 | 300 | 5,20 | 350 | 6,80 | 400 | 8,55 |
| — | — | 101 | 0,66 | 151 | 1,32 | 201 | 2,33 | 251 | 3,73 | 301 | 5,23 | 351 | 6,84 | 401 | 8,59 |
| — | — | 102 | 0,68 | 152 | 1,34 | 202 | 2,36 | 252 | 3,76 | 302 | 5,26 | 352 | 6,87 | 402 | 8,62 |
| — | — | 103 | 0,69 | 153 | 1,36 | 203 | 2,38 | 253 | 3,79 | 303 | 5,29 | 353 | 6,91 | 403 | 8,66 |
| — | — | 104 | 0,70 | 154 | 1,38 | 204 | 2,41 | 254 | 3,82 | 304 | 5,32 | 354 | 6,94 | 404 | 8,69 |
| — | — | 105 | 0,72 | 155 | 1,40 | 205 | 2,44 | 255 | 3,85 | 305 | 5,35 | 355 | 6,98 | 405 | 8,73 |
| — | — | 106 | 0,73 | 156 | 1,42 | 206 | 2,47 | 256 | 3,88 | 306 | 5,38 | 356 | 7,01 | 406 | 8,76 |
| — | — | 107 | 0,74 | 157 | 1,44 | 207 | 2,50 | 257 | 3,91 | 307 | 5,41 | 357 | 7,05 | 407 | 8,80 |
| — | — | 108 | 0,75 | 158 | 1,46 | 208 | 2,52 | 258 | 3,94 | 308 | 5,44 | 358 | 7,08 | 408 | 8,83 |
| — | — | 109 | 0,77 | 159 | 1,48 | 209 | 2,55 | 259 | 3,97 | 309 | 5,47 | 359 | 7,12 | 409 | 8,87 |
| — | — | 110 | 0,78 | 160 | 1,50 | 210 | 2,58 | 260 | 4,00 | 310 | 5,50 | 360 | 7,15 | 410 | 8,90 |
| — | — | 111 | 0,79 | 161 | 1,52 | 211 | 2,61 | 261 | 4,03 | 311 | 5,53 | 361 | 7,19 | 411 | 8,96 |
| — | — | 112 | 0,81 | 162 | 1,54 | 212 | 2,64 | 262 | 4,06 | 312 | 5,56 | 362 | 7,22 | 412 | 9,01 |
| — | — | 113 | 0,82 | 163 | 1,56 | 213 | 2,66 | 263 | 4,09 | 313 | 5,59 | 363 | 7,26 | 413 | 9,07 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| — | — | 114 | 0,83 | 164 | 1,58 | 214 | 2,69 | 264 | 4,12 | 314 | 5,62 | 364 | 7,29 | 414 | 9,12 |
| — | — | 115 | 0,85 | 165 | 1,60 | 215 | 2,72 | 265 | 4,15 | 315 | 5,65 | 365 | 7,33 | 415 | 9,18 |
| — | — | 116 | 0,86 | 166 | 1,62 | 216 | 2,75 | 266 | 4,18 | 316 | 5,68 | 366 | 7,36 | 416 | 9,23 |
| — | — | 117 | 0,87 | 167 | 1,64 | 217 | 2,78 | 267 | 4,21 | 317 | 5,71 | 367 | 7,40 | 417 | 9,29 |
| — | — | 118 | 0,88 | 168 | 1,66 | 218 | 2,80 | 268 | 4,24 | 318 | 5,74 | 368 | 7,43 | 418 | 9,34 |
| — | — | 119 | 0,90 | 169 | 1,68 | 219 | 2,83 | 269 | 4,27 | 319 | 5,77 | 369 | 7,47 | 419 | 9,40 |
| — | — | 120 | 0,91 | 170 | 1,70 | 220 | 2,86 | 270 | 4,30 | 320 | 5,80 | 370 | 7,50 | 420 | 9,45 |
| — | — | 121 | 0,92 | 171 | 1,72 | 221 | 2,89 | 271 | 4,33 | 321 | 5,83 | 371 | 7,54 | 421 | 9,51 |
| — | — | 122 | 0,94 | 172 | 1,74 | 222 | 2,92 | 272 | 4,36 | 322 | 5,86 | 372 | 7,57 | 422 | 9,56 |
| — | — | 123 | 0,95 | 173 | 1,76 | 223 | 2,94 | 273 | 4,39 | 323 | 5,89 | 373 | 7,61 | 423 | 9,62 |
| — | — | 124 | 0,96 | 174 | 1,78 | 224 | 2,97 | 274 | 4,42 | 324 | 5,92 | 374 | 7,64 | 424 | 9,67 |
| 75 | 0,45 | 125 | 0,98 | 175 | 1,80 | 225 | 3,00 | 275 | 4,45 | 325 | 5,95 | 375 | 7,68 | 425 | 9,73 |
| 76 | 0,46 | 126 | 0,99 | 176 | 1,82 | 226 | 3,03 | 276 | 4,48 | 326 | 5,98 | 376 | 7,71 | 426 | 9,78 |
| 77 | 0,46 | 127 | 1,00 | 177 | 1,84 | 227 | 3,06 | 277 | 4,51 | 327 | 6,01 | 377 | 7,75 | 427 | 9,84 |
| 78 | 0,47 | 128 | 1,01 | 178 | 1,86 | 228 | 3,08 | 278 | 4,54 | 328 | 6,04 | 378 | 7,78 | 428 | 9,89 |
| 79 | 0,47 | 129 | 1,03 | 179 | 1,88 | 229 | 3,11 | 279 | 4,57 | 329 | 6,07 | 379 | 7,82 | 429 | 9,95 |
| 80 | 0,48 | 130 | 1,04 | 180 | 1,90 | 230 | 3,14 | 280 | 4,60 | 330 | 6,10 | 380 | 7,85 | 430 | 10,00 |
| 81 | 0,49 | 131 | 1,05 | 181 | 1,92 | 231 | 3,17 | 281 | 4,63 | 331 | 6,14 | 381 | 7,89 | 431 | 10,06 |
| 82 | 0,49 | 132 | 1,07 | 182 | 1,94 | 232 | 3,20 | 282 | 4,66 | 332 | 6,17 | 382 | 7,92 | 432 | 10,11 |
| 83 | 0,50 | 133 | 1,08 | 183 | 1,96 | 233 | 3,22 | 283 | 4,69 | 333 | 6,21 | 383 | 7,96 | 433 | 10,17 |
| 84 | 0,50 | 134 | 1,09 | 184 | 1,98 | 234 | 3,25 | 284 | 4,72 | 334 | 6,24 | 384 | 7,99 | 434 | 10,22 |
| 85 | 0,50 | 135 | 1,11 | 185 | 2,00 | 235 | 3,28 | 285 | 4,75 | 335 | 6,28 | 385 | 8,03 | 435 | 10,28 |
| 86 | 0,51 | 136 | 1,12 | 186 | 2,02 | 236 | 3,31 | 286 | 4,78 | 336 | 6,31 | 386 | 8,06 | 436 | 10,33 |
| 87 | 0,52 | 137 | 1,13 | 187 | 2,04 | 237 | 3,34 | 287 | 4,81 | 337 | 6,35 | 387 | 8,10 | 437 | 10,39 |
| 88 | 0,53 | 138 | 1,14 | 188 | 2,06 | 238 | 3,36 | 288 | 4,84 | 338 | 6,38 | 388 | 8,13 | 438 | 10,44 |
| 89 | 0,54 | 139 | 1,16 | 189 | 2,08 | 239 | 3,39 | 289 | 4,87 | 339 | 6,42 | 389 | 8,17 | 439 | 10,50 |
| 90 | 0,55 | 140 | 1,17 | 190 | 2,10 | 240 | 3,42 | 290 | 4,90 | 340 | 6,45 | 390 | 8,20 | 440 | 10,55 |
| 91 | 0,56 | 141 | 1,18 | 191 | 2,12 | 241 | 3,45 | 291 | 4,93 | 341 | 6,49 | 391 | 8,24 | 441 | 10,61 |
| 92 | 0,57 | 142 | 1,20 | 192 | 2,14 | 242 | 3,48 | 292 | 4,96 | 342 | 6,52 | 392 | 8,27 | 442 | 10,66 |
| 93 | 0,58 | 143 | 1,21 | 193 | 2,16 | 243 | 3,50 | 293 | 4,99 | 343 | 6,56 | 393 | 8,31 | 443 | 10,72 |
| 94 | 0,59 | 144 | 1,22 | 194 | 2,18 | 244 | 3,53 | 294 | 5,02 | 344 | 6,59 | 394 | 8,34 | 444 | 10,77 |
| 95 | 0,60 | 145 | 1,24 | 195 | 2,20 | 245 | 3,56 | 295 | 5,05 | 345 | 6,63 | 395 | 8,38 | 445 | 10,83 |
| 96 | 0,61 | 146 | 1,25 | 196 | 2,22 | 246 | 3,59 | 296 | 5,08 | 346 | 6,66 | 396 | 8,41 | 446 | 10,88 |
| 97 | 0,62 | 147 | 1,26 | 197 | 2,24 | 247 | 3,62 | 297 | 5,11 | 347 | 6,70 | 397 | 8,45 | 447 | 10,94 |
| 98 | 0,63 | 148 | 1,27 | 198 | 2,26 | 248 | 3,64 | 298 | 5,14 | 348 | 6,73 | 398 | 8,48 | 448 | 10,99 |
| 99 | 0,64 | 149 | 1,29 | 199 | 2,28 | 249 | 3,67 | 299 | 5,17 | 349 | 6,77 | 399 | 8,52 | 449 | 11,05 |

ՀԱՎԵԼՎԱԾ 6

# ՎՃԱՐՄԱՆ ԹԵՐԹ №........

..............................................................................................

(Հարկը մուծող հիմնարկության կամ ձեռնարկության անունը)

..............................................................................................

(Հարկը ընդունող դրամարկղի կամ գանձարանի անունը)

Համաձայն ներքև բերված տեղեկագրի, սույնի հետ ներկայացնելով .............. ռ. .......... կ. ի հաշիվ բանվորներից և ծառայողներից (պետական կենսաթոշակառուներից) .............. ամսում հասանելիք եկամտահարկի — խնդրում ենք տալ պատշաճ անդորրագիր։

| №№ ըստ կարգի | ՀԱՐԿԻ ՏԵՍԱԿԸ | Հարկատուների թիվը | Հարկի գումարը | | | | Հատուկ նշանակումներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Պետական | | Տեղական | | |
| | | | ռ. | կ. | ռ. | կ. | |
| 1 | Աշխատավարձից պահած հարկը . | | | | | | |
| 2 | Կողմնակի աղբյուրներից հաշված հարկը, որը գանձվում է վարձողի կողմից համաձայն ուղղակի հարկերի տեսչի հատուկ ծանուցագրի . . . | | | | | | |

« ........ » .............................................. 192 թ. ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1) Հիմնարկության (ձեռնարկության) ղեկավարը .............................. (....................)

2) Հաշվետար .............................................. (....................)

(որը տանում է հարկագրման գործը)

# ՀԱՐԿԻ ՄՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

1. *Բանվորներից և ծառայողներից (պետական կենսաթոշակառուներից) գանձած հարկը* 3 օրվա ընթացքում, հաշված հարկը պահելու օրվանից, մուծվում է պետբանկի դրամարկղը:

Ծանոթություն.—*Այն տեղերում, որտեղ բացակայում են հարկեր ընդունող դրամարկղներ (գանձմաներ) և չկան փոստի հիմնարկություններ, որտեղ կատարվեյին դրամական փոխանցումների օպերացիաներ*,—հարկի մուծման ժամկետը սահմանվում է 7 օր. *հաշված հարկի պահելու օրվանից*:

2. *Հարկը մուծելիս պետք է ներկայացնել համապատասխան դրամարկղին (գանձմանը) սույն ձևով վճարման թերթ 2 օրինակից, որից մեկը դրամարկղի (գանձմանի) համապատասխան նշանակումով, դրամի մուծման մասին, վերադարձվում է վճարողին մուծման անդորրագրի փոխարեն և մյուսը կցվում է հիմնարկության (ձեռնարկության) հարկադրման համապատասխան գործին իբրև փաստաթուղթ ըստ հարկի մուծման*:

3. *Ամեն անգամ հաշված հարկը մուծվում է առանձին վճարման թերթով*:

4. *Վճարման թերթի «Հատուկ նշանակումներ» սյունյակում (ըստ 2-րդ կետի) պետք է ցույց տալ այն անձանց թիվը, որոնք ըստ կողմնակի աղբյուրների հաշված հարկը վճարում են ընդհանուր կարգով և որոնք չեն մտնում 3-րդ կետում նշված անձանց թվի մեջ*:

# ՀԱՎԵԼՎԱԾ 7

Ելից № ........ | Ձև № 7

« » ........ 192 թ.

## ՏԵՂԵԿԱԳԻՐ

........ բանվորներից, ծառայող-
(հիմնարկության, ձեռնարկության անունը)
ներից, պետ. կենսաթոշակառուներից, 192 թ. ........
ամսվա հասանելիք յեկամտահարկի գանձման մասին՝
Հիմնարկության (ձեռնարկության) վայրը ........
(Քաղաք, գավառ, ........ փողոց, գյուղ)

| | | | |
|---|---|---|---|
| Բանվորների, ծառայողների և պետ. կենսաթոշակառուների ընդհանուր թիվը | ........ | Աշխատավարձի ընդհանուր գում. | ........ |

Բանվորների, ծառայողների և պետ. կենսաթոշակառուների ընդհանուր թվից յենթակա յե հարկադրման № 1 ա ցանկով — ըստ կարգերի

| Կարգերը | Ամսական յեկամուտով ........ ից / մինչև | Ընդամենը հարկատուներ | Նրանց յեկամուտի գումարը | Հարկի գումարը Պետ. Ռ. | Հարկի գումարը Տ. Կ. | Կարգերը | Ամսական յեկամուտով ........ ից / մինչև | Ընդամենը հարկատուներ | Նրանց յեկամուտի գումարը | Հարկի գում. Պ. Ռ. | Հարկի գում. Տ. Կ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Մինչև 85 ռ. | | | | | 10 | 585 — 670 | | | | |
| 2 | 85 — 100 | | | | | 11 | 670 — 830 | | | | |
| 3 | 100 — 150 | | | | | 12 | 830 — 1000 | | | | |
| 4 | 150 — 200 | | | | | 13 | 1000 — 1170 | | | | |
| 5 | 200 — 250 | | | | | 14 | 1170 — 1330 | | | | |
| 6 | 250 — 330 | | | | | 15 | 1330 — 1660 | | | | |
| 7 | 330 — 410 | | | | | 16 | 1660 — 2000 | - | | | |
| 8 | 410 — 500 | | | | | 17 | 2000 — ավել | | | | |
| 9 | 500 — 585 | | | | | | Ընդամենը՝ | | | | |

1. Նույն թվում ազատվել են արտոնությամբ ըստ ընտանեկան դրության ........ հարկատու։

Բացի այդ, գյուղմիասնական հարկին յենթարկված լինելու հետևանքով, ազատված են յեկամտահարկից, բանվորներ, ծառայողներ և պետ. կենսաթոշակառուներ ընդամենը « » անձ, աշխատավարձի ընդհանուր գումարով « » ռ., թեև նրանց աշխատավարձը գերազանցել է հարկադրման մինիմումից։

Ստորագրություն՝

# ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ ԿԱԶՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. *Հաշվետվությունը ներկայացվում է անմիջականորեն այն ուղղակի հարկերի տեսչին, որի շրջանում գտնվում է հիմնարկությունը (ձեռնարկությունը) և տարեկան երկու անգամ, այն է՝*

*ա) Նոյեմբեր ամսվա հարկադրման մասին ոչ ուշ հունվարի 1-ից և բ) Մարտ ամսվա հարկադրման մասին ոչ ուշ մայիսի 1-ից:*

2. *Տեղեկագրի «Բանվորների, ծառայողների և պետ. կենսաթոշակառուների ընդհանուր թիվը» մասում պետք է ցույց տալ թե հարկադրվող և թե չհարկադրվող բոլոր աշխատավարձ ստացողներին, որոնք հաշվվում են հիմնարկության (ձեռնարկության) մեջ առ 31-ը մարտի (առ 30-ը նոյեմբերի):*

3. *Տեղեկագրի «Աշխատավարձի ընդհանուր գումարը» մասում ցույց է տրվում մարտ (նոյեմբեր) ամսում, այսինքն 2-րդ կետում հիշված անձանց հասանելիք բոլոր տեսակի աշխատավարձի ընդհանուր գումարը, անկախ նրանից այդ գումարն ամբողջովին հարկադրվում է թե ոչ:*

4. *Տեղեկագրի 3-րդ սյունյակում ցույց է տրվում փաստորեն հարկադրված անձանց թիվը, բաժանված ըստ կարգերի՝ 2-րդ սյունյակում նշված աշխատավարձի չափերի սահմաններում:*

5. *4-րդ սյունյակում ցույց է տրվում փաստորեն հարկադրված աշխատավարձի ընդհանուր գումարը, նույնպես ըստ կարգերի:*

6. *5-րդ սյունյակում ցույց է տրվում վճարման ենթակա հարկի գումարը (առանձին պետական և հօգուտ տեղերի) այսինքն՝ այն գումարը, որը ենթակա է պահման բանվորներից, ծառայողներից, հանումներից հետո (օրինակ՝ ըստ ընտանեկան դրության արտոնության կիրառումից հետո):*

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


*Էջեր*

I ԱՌԱՋԱԲԱՆ . . . . . . . . . . . . . . . . . 3—5

II ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՀԱՐԿՈՒՄԸ՝

1. *Ով է հարկադրում աշխատավարձը* . . . . . . . . . 6—7
2. *Բանվորներից, ծառայողներից և պետական կենսաթոշակառուներից վորոնք են հարկադրվում* . 8—11
3. *Աշխատավարձի և կենսաթոշակի հարկման կարգը* . . 11—13
4. *Ինչն է հարկադրվում* . . . . . . . . . . . . . . 13—16
5. *Հարկման տեխնիկան* . . . . . . . . . . . . . 16—18
6. *Յեկամտահարկի արտոնությունները* . . . . . . . . 18—21
7. *Հարկի գանձումը* . . . . . . . . . . . . . . . . 21—24
8. *Բողոքարկման կարգը* . . . . . . . . . . . . . 25
9. *Գանձված հարկի հանձնումը և հաշվետվությունը* . . 25—26
10. *Յեկամտահարկի ճիշտ կիրառման հսկողությունը* . . 26—27
11. *Յեկամտահարկի կանոնները խախտելու համար տուժման միջոցները* . . . . . . . . . . . 27—29

III ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ՝

1. *Ձև № 2՝ տակսային վարձատրության ստացողների մասին տեղեկագիր* . . . . . . . . . . . . 31
2. *Աշխատավարձ ստացողների հաշվառման ցուցակ* . . 33
3. *Հարկադրման ցուցակ* . . . . . . . . . . . . . . 35
4. № 1 *ա. Դրույքատախտակ* . . . . . . . . . . . . . 37
5. *Հաշված հարկի դրույքատախտակ* . . . . . . . . 40—41
6. *Վճարման թերթ* . . . . . . . . . . . . . . . . 43—44
7. *Ձև № 7 հաշվետու տեղեկագիր* . . . . . . . . . 45-46

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0002824

A II 23969

ԳԻՆԸ 25 ԿՈՊ.

14կ.